ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ
ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՌԲՎ-ԱՊՁԲ-17/2-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15
N 11/ 166 - 2017

ք. Երևան «25» «05» 2017թ.

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա.Գ. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «ԼեյկոԱլեքս» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Գ. Ալեքսանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված «ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ» /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

1.2. Ապրանքի մատակարարումը սկսվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից, մատակարարումը իրականացվում է վեց ամսվա ընթացքում՝ մինչև 2017թ-ի սեպտեմբերի 30-ը:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Ընդունել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **661 985,0 (վեց հարյուր վաթսունմեկ հազար ինը հարյուր ութսունհինգ)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները. Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 7 օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ապրանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կնքվի համաձայնագիր:*

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԱԾ	**«ԼեյկոԱլեքս» ՍՊԸ**
ք.Երևան, Նալբանդյան104	**ք. Արմավիր, Սայաթ-Նովա փող, 33տ**
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն	**«Ինեկոբանկ» ՓԲԸ**
Հ/հ 900011301075	**Հ/հ 205002223860**
ՀՎՀՀ 01507079	**ՀՎՀՀ 04414816**
Տնօրենի տեղակալ	**Տնօրեն**
Ա. Հակոբյան	**Գ. Ալեքսանյան**

Հավելված N 1
N 11/166-2017 << 25 >> << 05 >> 2017թ. կնքված
ծածկագրով գնման պայմանագրի

«ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ»
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

Չափ-նի հ/հ	Կոդեր	Ապրանքի անվանումը	Չ/մ	Տեխնիկական բնութագրերը և այլ պահանջներ
1	33141115/1/4/3	Բժշկական բամբակ	կգ	Բամբակ բժշկական, հիգրոսկոպիկ հիգիենիկ բաժնեծրարված 100գ կամ 50գ զանգվածով, ԳՕՍ 5556-81 Ֆիրմայի նշումով
2	33141118/1/4/2	Անձեռոցիկներ	հատ	16 սմ x14 սմ երկշերտ, թանզիվային, մանրէազերծ, անհատական փաթեթավորված N10 կամ N20 տուփերով: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը ըստ << կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»
3	33141142/1/4/2	Ներարկիչներ	հատ	Ներարկիչ 3.0 եռակոմպոնենտ 23G ասեղով Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշումով : Միանգամյա օգտագործման համար, պոլիմերային նյութերից (պոլիպրոպիլեն, պոլիստիրոլ և ստիրոլի ու ակրիլոնիտրիլի համապոլիմեր), 1 սմ³, 2 սմ³, 5 սմ³, 10 սմ³, 20 սմ³ անվանական տարողությամբ, 1,2 մմ-ից ոչ պակաս տրամագծով ծայրապանակով, ԳՕՍ 24861-91 (ԻՍՕ 7886-84) կամ համարժեք, փաթեթավորումը՝ ըստ ԳՕՍ 24861-91
4	33141142/2/4/2	Ներարկիչներ	հատ	Ներարկիչ 5.0 եռակոմպոնենտ 21G,22G, 23G ասեղով Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշումով Միանգամյա օգտագործման համար, պոլիմերային նյութերից (պոլիպրոպիլեն, պոլիստիրոլ և ստիրոլի ու ակրիլոնիտրիլի համապոլիմեր), 1 սմ³, 2 սմ³, 5 սմ³, 10 սմ³, 20 սմ³ անվանական տարողությամբ, 1,2 մմ-ից ոչ պակաս տրամագծով ծայրապանակով, ԳՕՍ 24861-91 (ԻՍՕ 7886-84) կամ համարժեք, փաթեթավորումը՝ ըստ ԳՕՍ 24861-91
5	33141142/3/4/2	Ներարկիչներ	հատ	Ներարկիչ 10.0 եռակոմպոնենտ 21G ասեղով Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն Ֆիրմայի նշումով Միանգամյա օգտագործման համար, պոլիմերային նյութերից (պոլիպրոպիլեն, պոլիստիրոլ և ստիրոլի ու ակրիլոնիտրիլի համապոլիմեր), 1 սմ³, 2 սմ³, 5 սմ³, 10 սմ³, 20 սմ³ անվանական տարողությամբ, 1,2 մմ-ից ոչ պակաս տրամագծով ծայրապանակով, ԳՕՍ 24861-91 (ԻՍՕ 7886-84) կամ համարժեք, փաթեթավորումը՝ ըստ ԳՕՍ 24861-91
6	33141142/4/4/2	Ներարկիչներ	հատ	Ներարկիչ 20.0 եռակոմպոնենտ 21G ասեղով Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն Ֆիրմայի նշումով Միանգամյա օգտագործման համար, պոլիմերային նյութերից (պոլիպրոպիլեն, պոլիստիրոլ և ստիրոլի ու ակրիլոնիտրիլի համապոլիմեր), 1 սմ³, 2 սմ³, 5 սմ³, 10 սմ³, 20 սմ³ անվանական տարողությամբ, 1,2 մմ-ից ոչ պակաս տրամագծով ծայրապանակով, ԳՕՍ 24861-91 (ԻՍՕ 7886-84) կամ համարժեք, փաթեթավորումը՝ ըստ ԳՕՍ 24861-91

7	38411200/1/4/2	Ջերմաչափեր	հատ	Ջերմաչափ բժշկական Սանդղակի սկզբնական արժեքը՝ 32(C -ից մինչև 35 (C, վերջնական արժեքը՝ 42 (C, սանդղակի բաժանքի արժեքը՝ 0,1 (C, չափերը՝ լայնությունը՝ 12 մմ (առավելագույն), երկարությունը՝ 125^{+15}_{-10} մմ, ԳՕՍ 302-79 կամ համարժեք, փաթեթավորումը, մակնշումը՝ ըստ ԳՕՍ 302-79: Ֆիրմայի նշումով
8	33141111/1/4/2	Կպչուն սպեղանիներ	հատ	Սպեղանի 2,5x5 կտորե Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն Ֆիրմայի նշումով
9	39224460/1/4/2	Սրվակներ	հատ	Մուգ գույնի ապակյա սրվակներ կափարիչով Ֆորմատ:250մլ Պահպանման պայմանները «պահել չոր տեղում», «կոտրվող է»
10	39224460/2/4/2	Սրվակներ	հատ	Մուգ գույնի ապակյա սրվակներ կափարիչով Ֆորմատ:100մլ Պահպանման պայմանները «պահել չոր տեղում», «կոտրվող է»
14	24451180/1/4/2	Աբակտերիլ քլոր	հատ	«Աբակտերիլ քլոր» (այսուհետ՝ ախտահանիչ միջոց) միջոցը 2-ջրային դիքլորիզոցիանուրոնային թթվի նատրիումական աղի հիմքի վրա է, թողարկվում է երկու ձևով՝ հաբեր և գրանուլներ: Ազդող նյութը հանդիսանում է ակտիվ քլորը, որն անջատվում է միջոցը ջրում լուծելու ժամանակ:Հաբերը սպիտակ են, գլանաձև, հիմքի մոտ ակոսներով, 3,40±0,30 գ զանգվածով, քլորի հոտով: Ակտիվ քլորի զանգվածը, որն առաջանում է մեկ հաբը ջրի մեջ լուծելու ժամանակ 1,5±0,2 գ է, լուծվելու ժամանակը՝ 6 րոպեից ոչ ավելի:Ախատահանիչ միջոցի գրանուլները մանր են, փխրուն, սպիտակ գույնի, քլորի հոտով: Ակտիվ քլորի զանգվածային բաժինը 56,0±5,0% է: Փխրունության խտությունը գ/սմ^3 – 0,92-0,01: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»
15	33141134/1/4/2	Բինտ էլաստիկ ամրակով 8սմx3մ	հատ	Բինտ էլաստիկ ամրակով 8սմx3մ Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»
16	33141135/1/4/2	Բինտ էլաստիկ ամրակով 8սմx1,5մ	հատ	Բինտ էլաստիկ ամրակով 8սմx1,5մ Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»
17	33141211/2/4/2	Բժշկական այլ գործիքներ և պարագաներ	հատ	Հիգիենիկ սավան ոչ գործվացքային նյութից /սլիզելին/ 60 x40սմ չափի: Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»
19	32351210/1/4/2	Ժապավեններ	հատ	Ժապավեն (ժգուտ) ռետինե արնեկանգ Էսմարխի տիպի 1400x20-25 մմ: Հանձման պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»
20	33141178/1/4/2	Դեղերի ներարկման համակարգեր	հատ	Ներարկման համակարգ ֆիլտրով: Հանձման պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»
22	24321590/1/4/3	Սուլֆացիլ նատրիում (Ալբուցիդ)	կգ	Սպիտակ բյուրեղական փոշի առանց հոտի:Հեշտ լուծվում է ջրում, գրեթե չի լուծվում սպիրտում: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»
23	33141110/1/4/2	Վիրակապեր	հատ	ԱՎԳ /ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԳԱԹԵԹ/մանրէազերծ մեկ հատ 7մ*10սմ բինտ ստերիլ, մանրէազերծ բարձիկ 10սմ*10սմ 2 հատ , փաթեթավորումը՝անջրաթափանց ձգվող պոլիէթիլենային թաղանթ: Հանձման պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»
24	33141110/2/4/2	Վիրակապեր	հատ	Վիրակապ բժշկական 7*14 ոչ մանէազերծ խտությունը +/- 36, քաշը՝34 ից 35 գր: Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»
25	24311600/1/4/3	Բորաթթու	կգ	Անգույն մանր բյուրեղական փոշի: Լուծվում է ջրում (սառը ջրում՝ 1:25, եռացող ջրում՝ 1:4)և սպիրտում

				(1:25): Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»
26	24311610/1/4/3	Տալկ	կգ	Սպիտակ սորուն փոշի է, շոշոփելիս ճարպային:Չի լուծվում ջրում և օրգանական լուծիչներում: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»

Ծ անոթություն

* 2,5 տարուց ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ, մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետ առնվազն 2/3-րդը, իսկ առանձին դեպքերում (հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման դեպքերում) դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն 1/2-րդը:

**Ապահովել դեղերի տեղափոխման և պահպանման պայմանները ՀՀ առողջապահության նախարարի 09.09.2010թ. N17-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան:

Տեխնիկական բնութագրերով բոլոր հղումների դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն հասկանալ կամ համարժեքը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԱԾ	**«ԼեյկոԱլեքս» ՍՊԸ**
ք.Երևան, Նալբանդյան104	**ք. Արմավիր, Սայաթ-Նովա փող, 33տ**
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի	**«Ինեկոբանկ» ՓԲԸ**
գործառնական վարչություն	
Հ/հ 900011301075	**Հ/հ 205002223860**
ՀՎՀՀ 01507079	**ՀՎՀՀ 04414816**
Տնօրենի տեղակալ	**Տնօրեն**
Ա. Հակոբյան	**Գ. Ալեքսանյան**

Հավելված N 2
«25» «05» 20/թ. կնքված
,N 11/166 -2017 ծածկագրով գնման պայմանագրի

«ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ»
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Չափ-նի համարը	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2017թ				Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	II եռամսյակ		III եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Բժշկական բամբակ	կգ	1799,00	20	35980,00	25	44975,00	45	80955,0
2	Անձեռոցիկներ	հատ	7,97	1000	7970,00	1000	7970,00	2000	15940,0
3	Ներարկիչներ	հատ	11,00	400	4400,00	300	3300,00	700	7700,0
4	Ներարկիչներ	հատ	11,00	1000	11000,00	1000	11000,00	2000	22000,0
5	Ներարկիչներ	հատ	17,00	500	8500,00	0	0,00	500	8500,0
6	Ներարկիչներ	հատ	27,00	500	13500,00	0	0,00	500	13500,0
7	Ջերմաչափեր	հատ	240,00	36	8640,00	0	0,00	36	8640,0
8	Կպչուն սպեղանիներ	հատ	138,00	50	6900,00	0	0,00	50	6900,0
9	Սրվակներ	հատ	110,00	200	22000,00	0	0,00	200	22000,0
10	Սրվակներ	հատ	60,00	55	3300,00	0	0,00	55	3300,0
14	Աբակտերիլ քլոր	հատ	11,00	1200	13200,00	0	0,00	1200	13200,0
15	Բինտ էլաստիկ ամրակով 8սմx3մ	հատ	310,00	30	9300,00	0	0,00	30	9300,0
16	Բինտ էլաստիկ ամրակով 8սմx1,5մ	հատ	170,00	30	5100,00	0	0,00	30	5100,0
17	Բժշկական այլ գործիքներ և պարագաներ	հատ	53,00	500	26500,00	500	26500,00	1000	53000,0
19	Ժապավեններ	հատ	490,00	200	98000,00	200	98000,00	400	196000,0
20	Դեղերի ներարկման համակարգեր	հատ	41,00	200	8200,00	0	0,00	200	8200,0
22	Սուլֆացիլ նատրիում (Ալբուցիդ)	կգ	15000,00	0.25	3750,00	0	0,00	0,25	3750,0
23	Վիրակապեր	հատ	250,00	250	62500,00	0	0,00	250	62500,0
24	Վիրակապեր	հատ	120,00	0	0,00	1000	120000,00	1000	120000,0
25	Բորաթթու	կգ	800,00	1	800,00	0	0,00	1	800,0
26	Տալկ	կգ	700,00	1	700,00	0	0,00	1	700,0
Ընդամենը				x	350240,0	x	311745,0	x	661985,0

Ծ անոթություն՝ Ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից:
Ապրանքը մատակարարվում է ք. Երևան, Ամիրյան 23 հասցեով:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301075
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ
Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«ԼեյկոԱլեքս» ՍՊԸ
ք. Արմավիր, Սայաթ-Նովա փող, 33տ
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/հ 205002223860
ՀՎՀՀ 04414816
Տնօրեն
Գ. Ալեքսանյան

Հավելված N 3
<<25>> <<05>> 20~~17~~թ. կնքված
N 11/166-2017 ծածկագրով գնման պայմանագրի

«ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ»
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ըստ ամիսների՝ ընդորում										
		Մարտ %	Ապրիլ %	Մայիս %	Հունիս %	Հուլիս %	Օգոստոս %	Սեպտեմբեր %	Հոկտեմբեր %	Նոյեմբեր %	Դեկտեմբեր %	Ընդամենը Տարի
1	Բժշկական բամբակ	0	0	44.44	44.44	100.00	100.00	100.00	100	100	100	100%
2	Անձեռոցիկներ	0	0	50.00	50.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
3	Ներարկիչներ	0	0	57.14	57.14	100.00	100.00	100.00	100	100	100	100%
4	Ներարկիչներ	0	0	50.00	50.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
5	Ներարկիչներ	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
6	Ներարկիչներ	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
7	Ջերմաչափեր	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
8	Կպչուն սպեղանիներ	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
9	Սրվակներ	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
10	Սրվակներ	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
14	Աբակտերիլ քլոր	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
15	Բինտ էլաստիկ ամրակով 8սմx3մ	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
16	Բինտ էլաստիկ ամրակով 8սմx1,5մ	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
17	Բժշկական այլ գործիքներ և պարագաներ	0	0	50.00	50.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
19	Ժապավեններ	0	0	50.00	50.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
20	Դեղերի ներարկման համակարգեր	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
22	Սուլֆացիլ նատրիում (Ալբուցիդ)	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
23	Վիրակապեր	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
24	Վիրակապեր	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
25	Բորաթթու	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
26	Տալկ	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301075
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ
Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«ԼեյկոԱլեքս» ՍՊԸ
ք. Արմավիր, Սայաթ-Նովա փող, 33տ
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/հ 205002223860
ՀՎՀՀ 04414816
Տնօրեն
Գ. Այեքսանյան

Հավելված 4
<< >> << >> 20 թ. կնքված
N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<< >> << >> 20 թ. կնքված
N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն